ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան “ 12” հունիսի 2012 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 15 Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՆ-ԳԿՀԴՆ-2012» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 2011թ. օգոստոսի 24-ին ստորագրված «ՀՀ կրթության և գիտության նախարարության և Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության միջև գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության զարգացման մասին» **մտադրությունների հուշագիրը՝** գիտական ծրագրերի աջակցության ֆինանսավորման շրջանակներում անցկացվող «ՀՀ ԿԳՆ-ԳԿՀԴՆ-2012» մրցույթը պատշաճ կազմակերպելու համար

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչությանը (պետ Լ. Մարդոյան)՝

1) մինչև ս.թ. սեպտեմբերի 15-ը ներառյալ՝ ապահովել մրցույթի հայտերի ընդունումը և հաշվառումը,
2) մրցույթի հայտ ներկայացրած գիտահետազոտական խմբերի ղեկավարների համար իրականացնել տեղեկատվական խորհրդատվություն,
3) մինչև սեպտեմբերի 25-ը՝ կազմակերպել ստացված հայտերի տեխնիկական ստուգումը և դրանց տրամադրումը փորձագիտական մասնագիտական խորհրդին,
4) մինչև հոկտեմբերի 15-ը՝ ապահովել մրցույթին ներկայացված հայտերի 1-ին փուլի գիտական փորձաքննության կազմակերպումը,

5) մինչև հոկտեմբերի 22-ը՝ ամփոփել գիտական փորձաքննության 1-ին փուլի արդյունքները, դրանք ներկայացնել փորձագիտական մասնագիտական խորհրդին,
6) մինչև հոկտեմբերի 30-ը՝ ապահովել մրցույթի 1-ին փուլի արդյունքների ճշտումը գերմանական կողմի հետ,
7) մինչև հոկտեմբերի 1-ը՝ ապահովել մրցույթի 2-րդ փուլ անցած հայտերի վերջնական ձևավորման պահանջները կոմիտեի կայքում տեղադրելու աշխատանքները,
8) մինչև սույն թվականի նոյեմբերի 15-ը՝ ապահովել մրցույթի 2-րդ փուլի հայտերի ընդունման աշխատանքները,
9) մինչև սույն թվականի դեկտեմբերի 3-ը՝ ապահովել մրցույթի 2-րդ փուլի հայտերի փորձաքննությունը և դրանց ներկայացումը փորձագիտական մասնագիտական խորհրդին,
10) մինչև դեկտեմբերի 5-ը՝ ապահովել մրցույթի 2-րդ փուլի արդյունքների և հաղթող ճանաչված հայտերի վերջնական ցուցակի ճշտումը գերմանական կողմի հետ,
11) մինչև դեկտեմբերի 17-ը՝ ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ տեղեկատվության լուսաբանումը կոմիտեի կայքում,
12) մինչև 2012թ. դեկտեմբերի 28-ը՝ կազմակերպել ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ղեկավարների հետ ֆինանսավորման պայմանագրերի կնքումը:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ Տ. Գալստյան)՝ ապահովել հայտերի գիտական փորձաքննության իրականացման համար անհրաժեշտ միջոցների սահմանված կարգով տրամադրումը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ